ՕՖԵԼՅԱ ԴԱԼԱՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ՀԱՅՐԵՐԻ ԵՎ ՈՐԴԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր և բառակապակցություններ. ճանապարհ, սերունդներ, կերպար, զրույց, դարբին, հարաբերություն, փոքր արձակ, հայրեր ու զավակներ, սերունդների հերթափոխ:

Ключевые слова и выражения: путь, поколения, персонажи, беседа, кузнец, отношения, маленькая проза, отцы и дети, поколения вознаграждений.

Key words and expressions: way, generations, character, conversation, blacksmith, relationship, small prose, fathers and sons, change of generations.

Վ.Պետրոսյանը, իր ոճին հավատարիմ մնալով, փոքր կտավի վրա փայլուն կերպով ներկայացրել է հայրերի ու որդիների՝ սերունդների փոխհարաբերությունները: <<Հեղինակը բնավ չի փորձում հակադրել սերունդներին, ընդհակառակը, նկարագրելով նրանց հերթափոխության բնականոն ընթացքը, շեշտը դնում է ոչ թե այդ սերունդներին իրարից անջատող, այլ իրար միացնող գործոնների վրա>>:[1] Այդ գործոններից կարելի է առանձնացնել հարգանքը հայրերի նկատմամբ: <<Գեղա՛մ,-որդուն դառավ դարբին Սողոմոնը,-Սանասարին ժամ չէ՞ նշանելու: Արդեն հզոր դարբին է: Սանասարը,որ թոռ էր, ականջի ծայրով լսեց, որ իր մասին է խոսքը և խոնարհ ետ մնաց, որ ավագների զրույցը հանկարծ ականջ չդնի: -Կամքը քոնն է, հայր, նշանենք>>[2]: Եվ այդ հարգանքը տրված է ի վերուստ՝ փոխանցվելով հորից որդի: Կամ դարբին Պարթևի որդին՝ Արմենը, չի համարձակվում ծխել իր հոր մոտ, նույնն անում է Արմենի որդին՝ Վահեն:

<<Ամեն հայր երեխայի հպարտությունը պետք է լինի>>[3](<<Օր և կյանք>>) այս սկզբունքով են առաջնորդվում Վ.Պետրոսյանի հերոսները: Ասվածի կարկառուն օրինակն է <<Նրա հայրանունը>> պատմվածքը: Վերջինիս հերոսը, հանուն երեխայի մաքուր ազգանվան, հայրանունի, չի

[1] Ավանգարդ, թերթ,Եր., 1975,9 ապրիլ:
[2] Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը,Եր., 1980, էջ 47:
[3] Նույն տեղում, էջ 30:

խնայում կյանքը՝գլուխ չխոնարհելով և խնդրագիր չգրելով ֆաշիստին: <<-Եթե դու այսօր կամ վաղն առավոտյան խնդրագիր գրես գնդապետի անունով, որ կկարդանք գյուղի առաջ…,-ասաց դահիճը:-Շնորհակալ եմ, ես չեմ ուզում, որ իմ զավակն ապագայում ամաչելով գրի իր հայրանունը…,-պատասխանեց պարտիզանը>>[4]: Այստեղ հեղինակը ներկայացրել է ոչ միայն հոր կերպարը, այլև հայի կամքի ուժն ու մինչև կյանքի վերջ պատիվն արժանավայել պահելը:

Հայրը սովորեցնում է երեխային, թե ինչպես պետք է գտնել մեծ աշխարհի ճանապարհը. <<Կեսգիշերային զրույց>> պատմվածքը դրա վառ ապացույցն է: Հայրը որդու հետ եկել է Մոսկվա, որ տասնյոթ տարեկան որդին ընդունվի համալսարան: <<Հայրիկ, դու չհասցրիր տեսնել, թե ես ինչպես եմ գրում <<ա>> տառը, իսկ ես, ահա, որդուս հետ եկել-հասել եմ այստեղ, որ նա մենակ ու անպաշտպան չզգա իրեն>>[5]: Բայց որքան էլ հայրերը մշտապես որդիների կողքին լինեն, միևնույն է<<…Ծառը՝ինքը պիտի կարողանա դիմանալ-ապրել՝կռվել քամու դեմ, ծարավի դեմ, որդերի դեմ, որ կրծում են նրա արմատները: Ծառը՝ինքը>>[6]:

<<Ժամանակակից արձակը հեռացել է իր երբեմնի շատախոսությունից>>, [7] և Վ.Պետրոսյանը զերծ մնալով <<շատախոսությունից>>, իրեն բնորոշ ոճով այնպես է ներկայացնում սովորական, պարզ, կենցաղային առօրյան, որ ընթերցողը չի բավարավում մեկ անգամ ընթերցելով: Թվում է՝ շատ պարզ է գրված և ամեն ինչ հասկանալի է, բայց ենթատեքստերը շատ են, շերտերը՝հաստ և յուրովի հասկանալի.պարզ, բայց ոչ պարզունակ: Վ.Պետրոսյանը նկարագրում է կյանքն ինչպես որ է և չի թաքցնում վերաբերմունքը այս կամ այն երևույթի շուրջ: << Նամակ նախկին հարևանիս>> պատմվածքում բացակայում է հայրը.հայրը թողնելով հինգ տարեկան որդուն հեռացել է ուրիշ կնոջ մոտ: Նրան չի հուզում՝ինչպես է երեխան առաջին անգամ գրում <<ա>> տառը, կամ, թե ինչպես են մյուս երեխաները հպարտանում իրենց հայրերով, իսկ իր Մանվելիկը չգիտի էլ ինչպիսին է լինում հայրը: Հեղինակը չթաքցնելով իր սուր դիտարկումը,նամակի վերջում գրում է.<<…չեմ կարող չասել քեզ, թե որքան վատ ու անարժան մարդ եմ քեզ համարում>>:[8] Բայց միայն հայրերը չէ, որ մոռացել են որդիներին, այլ նաև հակառակ երևույթին ենք

---

[4] Սովետական Հայաստան, թերթ,Եր.,1958,12, հունվար:
[5] ՊետրոսյանՎ., Վերջին ուսուցիչը,Եր.1980, էջ 11:
[6] Նույն տեղում, էջ 11:
[7] Ն.Ադալյան,Ժամանակակից հայ արձակը, Եր.,1981, էջ 179:
[8] Ավանգարդ, թերթ, Եր., 1957,25 հուլիս:

բախվում.<<Որդին քսան տարի չէր տեսել հորը.գնացել էր բանակ, հետո ամուսնացել, մնացել էր Մախաչկալայում>>[9]: Քանդվել է իրար միացնող կամուրջը: Տղան արդեն չի ճանաչում հորը.օտարացած անհատներ.<<Հայրը մի անգամ նամակում գանգատվել էր, որ սիրտը հիվանդ է, ինչ-որ դեղի անուն էր գրել: Վարդանին հանկարծ թվաց, թե այն ժամանակ հայրը իրենից այդ դեղն էր խնդրել, երևի մտածել էր, որ որդին կճարի>>[10](<<Լուցկի>>): Բայց մենք ունենք ոչ միայն հորը մոռացած որդի, այլև սեփական արմատներից ու հողից կտրված մարդ.<<Նա հանկարծ ուզեցավ մի մեծ, կարևոր բան ասել հոր ընկերներին, բայց հայերեն բառերը պակասեցին: -Կներեք, եթե ես հայերեն չկարողանամ…>>[11]:

Վ.Պետրոսյանը,անտարակույս, առաջին հերթին երիտասարդության գրողն է և ստեղծագործությունների մեծ մասը նվիրված է նրանց հոգեբանության բացահայտմանը: << Թափվող տերևների և հոր մասին>> պատմվածքում տասնյոթ տարեկան պատանին կանգնած է կյանք մտնելու շեմին և առաջին լուրջ բախումն է ունենում կյանքի հետ: Հոր կերպարը փշրվում է նրա մեջ մի վայրկյանում: Հայրը համալսարանում քարոզում է աշխատանքն ու նրա բարիքները, բայց տանը՝առանց դասախոսի քողի, տղային զարտուղի ճանապարհով է ուզում հասցնել ուսանողական նստարանին: <<-Աշխատանքը լավ է, երբ ինստիտուտի ոչ մի հույս չկա,-նույն անտարբերությամբ ասաց հայրը:-Բայց դու ինստիտուտում այդպես չասացիր, հայրիկ:-Դա այնտեղ էր, իսկ այստեղ ուրիշ է.մեր տանն ենք, կարող ենք անկեղծ խոսել:-Իսկ այնտեղ կարելի էր անկեղծ չխոսե՞լ,հայրի՜կ>>[12]: Տասնյոթ տարեկանը միանգամից մեծացավ ու հասունացավ: Այստեղ էլ հայրը չի թողնում, որ որդին <<ծառ>> դառնա՝պայքարի քամիների ու անձրևների դեմ:

Հեղինակը գրում է.<<Բոլոր այս տարիներին ես վախեցել եմ հորս մասին գրել, որովհետև վախեցել եմ, թե կհորինեմ նրան>>[13]: Հայրերը չկան, բայց նրանց մասին անընդհատ խոսվում է, նրանք ապրում են որդիների, ապա՝ թոռների հիշողություններում: Որդիների հավաքական կերպարը հեղինակն է, ու նրա հորը տեսնում ենք դարբնի, ուսուցչի, հասարակ գյուղացու կամ պարզապես լավ, բարի, հանդուրժող մարդու կերպարում. <<…որ ձեր հերը խելք ունենար,-դժգոհում է մայրս,-հետ չէր գա էս

[9] Վ.Պետրոսյան, Վերջին ուսուցիչը,Եր.1980, էջ 68:
[10] Նույն տեղում, էջ 70:
[11] Նույն տեղում, էջ 74:
[12] Ավանգարդ,թերթ, 1958,18, հոկտեմբեր:
[13] Վ.Պետրոսյան, Վերջին ուսուցիչը,Եր.1980, էջ 152:

քամբախը,գլուխը լիքը խելք՝ուշը գնում էր մի պտղունց հողի համար>>[14]: Եվ որդիները, այս ու այն տեղից դրվագներ հավաքելով հայրերի կյանքից,դրանք դարձնում են մի ամբողջություն ու պահում ամբողջ կյանքի ընթացքում: Նրանք հանդիպում են գրեթե հասակակիցներ դարձած և <<կիսվում>> հիշողություններով.<<Այսօր հորս ծննդյան օրն է: Այսօր նա յոթանասունհինգ տարեկան պիտի դառնար, իսկ երեսունչորս տարի է չկա: Մի քանի շաբաթ առաջ լրացավ իմ քառասունմեկը, ուրեմն հորս հետ հավասարվեցի>>[15]: Եվ հայրերն ապրում են այնքան, քանի դեռ ապրում են նրանց մասին հիշողությունները.<<…մարդն իր մահից հետո շարունակում է ապրել առնվազն հարյուր տարի: Չի մեռնում այնքան, քանի դեռ կան-ապրում են մարդիկ, որ նրա մասին լսել են ուրիշներից: Ուրեմն, հայրս դեռ ապրում է: Կապրի նաև ինձնից հետո, որովհետև ես որդուս շատ եմ պատմել հորս մասին:[16]

Ասվածը կարելի է ամփոփել <<Մեր հայրերը>> պատմվածքով, որտեղ <<ապրում են>> այն հավաստի,իսկական, հողին կպած հայրերը, ,որոնք ունեն <<աշակերտական տետրի թղթի մի երեսին տեղավորվող>>իրենց կենսագրությունը: Հեղինակը որդի դարձած տխրում է<<կողքի սենյակում հանգստացող դարբին-հոր համար, պատերազմի անհայտ դաշտերում ցորենի հատիկների փոխված միլիոնավոր անանուն հայրերի համար, տխրում է իր հոր համար>>[17]: Բայց այս տխրությունը չի վհատեցնում, չի հասցնում ծայրահեղության, այլ փոխանցվում է սերունդներին՝դառնալով նրանց համար ուղենիշ:

<<Որ որդին է հասկանում հորը և ինչու պիտի հասկանա: Հայրերն է, որ պիտի հասկանան որդիներին-դա նրանց պատիժն է և երջանկությունը միաժամանակ>>[18] և,իսկապես, Վ.Պետրոսյանի կերտած հայրերը մեծ ոգևորությամբ ու սիրով են ընդունում հայր լինելու կոչումը:

[14] Նույն տեղում, էջ 155:
[15] Նույն տեղում, էջ 9:
[16] Նույն տեղում, էջ 9:
[17] Նույն տեղում, էջ 158:
[18] Նույն տեղում, էջ 17:

Օ. Դալաքյան

Հայրերի և որդիների փոխհարաբերությունը Վ. Պետրոսյանի պատմվածքներում

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են Վ.Պետրոսյանի փոքր արձակի առանցքային թեմաներից մեկի `հայրերի ու որդիների փոխհարաբերության հարցերը: Մասնավորապես ընդգծված է, որ Վ.Պետրոսյանը կենտրոնանում է ոչ թե հայրերին ու որդիներին միմյանցից անջատող, այլ միացնող հանգամանքների վրա, հայտնաբերում սերնդափոխության ժառանգական կապերը:

О. Далакян

Отношения между отцом и сыном в коротких рассказах В.Петросяна

Резюме

В статье обсуждается вопросы одной из ключевых тем маленькой прозы В.Петросяна. В частности, подчеркивается, что В.Петросян сосредоточен не на том, чтобы отделить отцов и сыновей друг от друга, но и от условий, открывающих наследственные связи смены поколений.

O. Dalakyan

The relationship between fathers and sons in V.Petrosyan's short stories

Summary

In the short stories of V.Petrosyan the article discusses one of the important thems: the relationship between fathers and sons. Particularly, it is underlined that V.Petrosyan focuses not on the separation of fathers and sons, but on connection of circumstances,discovers the hereditary links of the generation change.